

Արձանագրություն № 1

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2022թ. օգոստոսի 26-ի նիստի:

Ներկա էին, Ս.Շողերյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ.Ավագյանը, Ա.Թովմասյանը:

Օրակարգ

1. Ուսումնական տարին սկսելու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը:
2. Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումները նոր տրված ձևաչափերին համապատասխանեցնելու հարցը:
3. Ամբիոնի ծավալի և ծանրաբեռնվածության քննարկում և հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

ուսումնական տարին սկսելու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը: Ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը նշեց, որ անհրաժեշտ է պատրաստվել նոր ուսումնական տարուն: Անհրաժեշտ է վերանայել առարկայական նկարագրերը և տրոհումները այն հարմարեցնելով պահանջված նոր ձևաչափերին: Դասախոսությունների բովանդակությունը վերանայել այն լրացնելով գրականության վերջին տվյալներով: Ցանկալի է բոլոր դասախոսությունների համար պատրաստել սահիկահանդեսներ, որը հնարավորություն կտա ուսանողին տրվող նյութը դարձնելով ավելի մատչելի և հետաքրքիր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտները՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Մ.Ավագյանը, Ս.Եղիազարյանը: Նշեցին, որ աշխատանքները ընթացքի մեջ են և շուտով կներկայացնեն ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ

դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները կներբեռնվի էլեկտրոնային հարթակում:

ԼՄԵՑԻՆ

2022-2023ուստարվա Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի I կիսամյակի Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների կատարման ընթացքի հարցը:

Արտահայտվեցին

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը , դասախոսներ^Ձ Լ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Եղիազարյանը, Ա. Գասպարյանը նշեցին, որ դասախոսները կատարել են I կիսամյակի համար նախատեսված աշխատանքները՝ վերանայել են առարկայական ծրագրերը, դասախոսությունները, պատրաստել են սահիկահանդես բոլոր թեմաներով և տեղադրել են էլեկտրոնային հարթակում: Էլեկտրոնային հարթակում, տեղադրվող բոլոր Առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները իրենց բովանդակությամբ և որակով համապատասխանում են առարկային ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ

Բոլոր ներկայացրած Առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները երաշխավորել ներբեռնման :

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի ծավալի և դասաբաշխման հաստատման հարցը: Ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը ներկայացրեց ընթացիք ուս. տարվա ամբիոնի ժամաքանակը, Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2022-2023 ուս.տարվա ժամաքանակը կազմում է 5335 ժամ:

5335 ժամը բաշխվել է հետևյալ կերպ՝

1.	Շողերյան Սիրինե Արմենի՝	կ.գ.թ., դոցենտ	1.0 հաստիք,	855ժ .
2.	Ավանեսյան Լյուդմիլա Գրիգորի՝	մ.գ.թ., դոցենտ	1.0 հաստիք,	869ժ.
3.	Հովհաննիսյան Վարուժան Ստեփանի՝	կ.գ.դ., պրոֆեսոր	1.0 հաստիք,	426 ժ.
4.	Գասպարյան Արմեն Սանասարի՝	կ.գ.թ., դոցենտ	1.0 հաստիք,	880ժ.
5.	Եղիազարյան Սելիլա Սարիբեկի՝	դոցենտ	0,5 հաստիք,	491ժ.
6.	Ավագյան Մարիամ Ավետիսի	կ.գ.թ., դոցենտ	0,5 հաստիք,	459ժ

Թափուր ժամերի քանակը 1108 ժամ է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դասախոսներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Շողերյանը, Ս.Եղիազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

հավանություն տալ ժամաքանակների բաշխվածությանը և ներկայացնել ուսումնական մաս:

Ամբիոնի վարիչի ժ/պ՝
Քարտուղար՝

Ս.Շողերյանը
Ա.Թովմասյան

Արձանագրություն № 2

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2022թ. սեպտեմբերի 19 -ի նիստի

Ներկա էին, Ս.Շողերյանը Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ս.Ավագյանը, Ա.Գասպարյանը Ա.Թովմասյան:

Օրակարգ`

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
2. Կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:
3. Սեզոնային էքսկուրսիաների կազմակերպում:
4. Շրջակա միջավայրի գիտություններ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների պրակտիկայի անցկացման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը: Ամբիոնի վարիչ՝ Ս.Շողերյանը նշեց, որ 2022-2023 ուս. տարում մագիստրոսական 1-ին կուրսում ամբիոնն ունի 2 ուսանող, 2-րդ կուրսում 5 ուսանող, հեռակա բակալավրյատում 4 ուսանող: Մագիստրոսական թեզերը բաշխվել են դասախոսներին հետևյալ սկզբունքով:

Անուն ազգանուն	Մագ.1-ին կուրս	Բակալավր 5-րդ կուրս
	Առկա	Հեռակա
Լ.Ավանեսյան		2
Վ. Հովհաննիսյան	1	
Ա.Գասպարյան		2
Ս.Շողերյան	1	

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Գասպարյան, Ս.Շողերյան, Ս.Եղիազարյան: Նրանք իրենց ելույթներում նշեցին ուսանողներին հանձնարարվելիք թեմաները:

Մագիստրատուրա I կուրս

1. Ծանր մետաղների առկայությունը սննդամթերքում (Լոռու մարզ) :

Կատարող – Մերի Կարապետյան

Ղեկավար - Վ. Հովհաննիսյան

2. Ուղեղի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը ինֆորմացիոն ծանրաբեռնվածությունների պայմաններում:

Կատարող – Զարուհի Կիրակոսյան

Ղեկավար - Ս.Շողերյան

Հեռակա 5-րդ կուրս

1. Սնկերը որպես միջավայրի աղտոտվածության կենսաինդիկատորներ-

Կատարող – Գեղամ Գրիգորյան

Ղեկավար - Ա.Գասպարյան

2. Ագրոէկոտուրիզմի ռեսուրսները Արարատի մարզում

Կատարող – Կարինե Հյուսնունց

Ղեկավար - Լ.Ավանեսյան

3. Սննդի մեջ ծանր մետաղների առկայությունը և դրանց ազդեցությունը դպրոցականների մտավոր և ֆիզիկական զարգացման վրա

Կատարող – Լիլիթ Խաչատրյան

Ղեկավար - Լ.Ավանեսյան

4. Արարատյան դաշտի մալարիայի մոծակների կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները:

Կատարող – Մարգարիտ Նալբանդյան

Ղեկավար - Ա.Գասպարյան

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի զիտություն:

ԼՍԵՑԻՆ

կուրսային աշխատանքների թեմաների հաստատման հարցը: Ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը նշեց, որ ամբիոնում կուրսային աշխատանքներ ղեկավարելու են Լ.Ավանեսյանը և Ս.Շողերյանը ,հետևյալ թեմաներով`

Կենդանիների էկոլոգիա

1. Միջավայրը և օրգանիզմի զարգացումը:
2. Ապրելու միջավայրը և տեղաշարժման հիմնական եղանակները թռչունների մոտ:
3. Ապրելու միջավայրը և կերի հայթայթման եղանակները թռչունների մոտ:
4. Ձկների էկոլոգիան և տնտեսական նշանակությունը:
5. Երկկենցաղների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
6. Սողունների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
7. Թռչունների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
8. Կաթնասունների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
9. Կենդանի բարոմետրեր, խոնավաչափեր, սեյսմոգրաֆներ:
10. Կենդանիների պաշտպանական հատկությունները:

Գրականություն

1. Б.Токин – Общая эмбриология, Москва, 1970г. стр.355-381
2. Л.Шультин – Орнитология, Ленинград . 1940г., стр.166-194
3. Л.Шультин – Орнитология, Ленинград . 1940г., стр.194-210
4. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 83-111
5. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 137-152
6. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 182-201
7. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 257-281
8. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 366-400
9. И.Литинецкий – Бионика, Москва, 1976г. срт. 121-139
10. Х.Котт – Приспособительная окраска животных, Москва, 1950г. стр.287-298

Ընդհանուր էկոլոգիա

1. Ջրային և ցամաքային էկոհամակարգեր:
2. Հիդրոբիոտոնների սնուցումը:

3. Քաղաքային միջավայրի յուրահատկությունը:
4. Էկոլոգիական իրավիճակը և ազգաբնակչության առողջությունը:
5. Էկոհամակարգերի քայքայումը անապատներում:
6. Մարդու տեղը կենսոլորտային գործընթացներում, նրա և մյուս կենդանի օրգանիզմների միջև գոյություն ունեցող տարբերությունները:
7. Մարդու շրջակա միջավայրի առանձնահատկությունները և վիճակը:

Գրականություն

1. Константинов, стр.152
2. Воронков,, стр.279-295
3. Воронков,, стр.323-339
4. Воронков,, стр.365-385
5. Воронков,, стр.115-130
6. Воронков,, стр.131-147

ՈՐՈՇԵՑԻՆ

կուրսային աշխատանքները ուսանողներին հանձնարարել ժամանակին և հետևել ընթացքին:

ԼՄԵՑԻՆ

Շրջակա միջավայրի գիտություններ բաժնի ուսանողներին սեզոնային էքսկուրսիա տանելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ. Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Գասպարյանը, Ս.Շողերյանը: Նշեցին, որ Էկոլոգիա և բնապահպանության բաժնի բոլոր կուրսերի արդյունավետ ուսուցումը ապահովելու համար խիստ անհրաժեշտ են սեզոնային էքսկուրսիաները դեպի հանրապետության տարբեր վայրեր: Այդ էքսկուրսիաները հնարավորություն են տալիս ուսանողներին ծանոթանալու ՀՀ տարբեր մարզերի կենսաբազմազանությանը և բնակլիմայական պայմաններին:

ՈՐՈՇԵՑԻՆ

Շջակա միջավայրի գիտություններ բաժնի ուսանողների համար ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ կազմակերպել էքսկուրսիա դեպի Ստեփանավանի դենտրոպարկ, Խոսրովի արգելոց և Դիլիջանի ազգային պարկ, Դիլիջանի “Թումո” կենտրոն և ԱՅԲ դպրոց, Ջերմուկ, Վայք,Նորավանք:

ԼՄԵՑԻՆ

Շրջակա միջավայրի գիտություններ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների պրակտիկայի անցկացման հարցը : Ամբիոնի վարիչ՝ Ս.Շողերյանը նշեց, որ 3-րդ կուրսի 2 ուսանողներ իրենց ուսումնական պրակտիկան կանցկացնեն ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերեվութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» լաբորատորիայում: Այստեղ նրանք կծանոթանան շրջակա միջավայրի որակի վերահսկման ռազմավարության մշակման սկզբունքներին, մոնիթորինգի անցկացման մեթոդաբանությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դասախոսներ՝ Լ.Ավանեսյանը, Մ.Ավագյանը, Վ.Հովհաննիսյանը: Նշեցին, որ կենտրոնը հազեցած է գերժամանակակից սարքավորումներով և ուսանողները հնարավորություն կունենան ծանոթանալու նմաուշների անհրաժեշտ մշակման և համապատասխան չափումների սկզբունքներին: Կյուրացնեն տվյալների մշակման մաթեմատիկական մոտեցումներին:

ՈՐՈՇԵՑԻՆ

3-րդ կուրսի ուսումնական պրակտիկան անցկացնել կանցկացնեն ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերեվութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» լաբորատորիայում:

Ամբիոնի վարիչ
քարտուղար

Ս.Շողերյան
Ա.Թովմասյան

Արձանագրություն № 3

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի, 2022թ. հոկտեմբերի 24-ի նիստի:

Ներկա էին Լ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, Ռ. Սադոյանը, Ս. Եղիազարյանը, Ա. Գասպարյանը, Ս. Շողերյանը, Ա. Թովմասյան, Մ. Ավագյանը:

Օրակարգ

1. Դասալսումների քննարկում և գնահատում:
2. Ուսումնական պրակտիկայի ընթացքը:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

Դասալսումների արդյունքների մասին ամբիոնի վարիչ Ս. Շողերյանի հաղորդումը: Նա նշեց, որ ամբիոնում անց են կացվել փոխադարձ դասալսումներ: Դասախոսները իրենց աշխատանքի նկատմամբ ունեն բարձր պատասխանատվություն: Լեկցիաները, սեմինարները, լաբորատոր և գործնական պարապմունքները անց են կացվում ըստ առարկայական ծրագրերի և օրացույցային պլանների: Ամբիոնի դասախոսները դասերը անց են կացնում բարձր մակարդակով, նրանք գրագետ են, բանիմաց և պարտաճանաչ:

Դասալսումների ընթացքում դասախոսները դրսևորել են գիտելիքների խորը և լայն իմացություն, հստակ արտահայտված է եղել դասի պլանավորումը, նպատակը, դասախոսի անկողմնակալ հարգալից և արդարացի վերաբերմունքը ուսանողի նկատմամբ: Օգտագործվող մեթոդները, ստեղծված բարենպաստ միջավայրը և ժամանակի ճիշտ օգտագործումը նպաստավոր է եղել դասի իրականացման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ. Ավանեսյանը, Ա. Գասպարյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Շողերյանը, Ս. Եղիազարյանը: Նրանք իրենց ելույթներում նշեցին, որ գոհ են փոխադարձ դասալսումներից, հստակ տրվում էր դասի թեման, նպատակը, տրված ժամանակահատվածում լավ ներկայացվում էր դասի կառուցվածքը և տարբեր մասերի կենսագործումը: Այս դասալսումները և քննարկումները հատկապես կարևոր են սկսնակ, երիտասարդ դասախոսների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ամբիոնի դասախոսների աշխատանքը բավարարում է լիարժեք դասի անցկացման պահանջված չափանիշներին:

ԼՄԵՑԻՆ

Ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներին մասնագիտական պրակտիկայի անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

մեթոդիստ Լ.Ավանեսյանը նշեց, որ 2-րդ կուրսի մագիստրոսները իրենց մասնագիտական պրակտիկան կանցկացնեն ՀՀ ԳԱԱ <Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնում > : Պրակտիկայի ընթացքում ուսանողները նախապես ծանոթացել են նախատեսված աշխատանքներին և այն մեթոդներին, որոնց օգնությամբ կատարվում են դրանք: <Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնում > պլանավորվախ է մասնակցել միջատների հավաքածուների վարակագրման, էտիկետավորման, մաքրման աշխատանքներին: Միջատների պահպանվող նմուշներից շատերը մի քանի 100 տարվա պատմություն ունեն, անզգուշմոտեցումից դրանք կարող են կոտրվել և ոչնչանալ, եթե աշխատանքի կատարման կանոնները խախտվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ

Երաշխավորել մագիստրոսների 2-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան անցկացնել ՀՀ ԳԱԱ <Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնում >:

Ամբիոնի վարիչի պ/կ՝

Ս.Շողերյան

քարտուղար՝

Ա.Թովմասյան

Արձանագրություն № 4

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2022թ. նոյեմբերի 17-ի նիստի:

Ներկա էին, Ս.Շողերյան, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա. Գասպարյանը, Մ.Ավագյանը, Ա.Թովմասյանը:

Օրակարգ

1. Առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումներ և ինքնուրույն աշխատանքների ամփոփում:
2. Ուսումնական պրակտիկայի ընթացքը:
3. Ընթացիկ հարցեր

ԼՄԵՑԻՆ

առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ. Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Մ.Ավագյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ առաջին գրավոր աշխատանքները գրվել են, ստուգվում և գնահատվում են: Հանձնարարվել և հետևել նաև ինքնուրույն աշխատանքների կատարմանը և ստուգումը և գնահատելը կատարել դեկանատի կողմից ներկայացված գրաֆիկով: Ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը և դասախոսները նշեցին, որ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող բոլոր դասընթացներից անց են կացվել գրավոր աշխատանքներ, գրվել են ռեֆերատներ: Աշխատանքները ստուգվել և գնահատվել են : Պետք է նշել, որ արդյունքները գոհացուցիչ են, չներկայացած ուսանողներ չենք ունեցել և նախորդ տարվա համեմատ ռեֆերատները ավելի որակյալ են և լրիվ համապատասխանում են ռեֆերատին ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ

գնահատված աշխատանքների արդյունքները անց են կացվել էլեկտրոնային ամփոփագրերում:

ԼՄԵՑԻՆ

Շրջակա միջավայրի գիտություններ մասնագիտության հեռակա բակալավրյատի 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողներին ուսումնական պրակտիկայի անցկացման հարցը: Ամբիոնի վարիչ Ս. Շողերյանը նշեց, որ պրակտիկան ուսանողները կանցկացնեն ՀՀ ԳԱԱ <Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնում >: Գիտական կենտրոնում ուսանողները կձանոթանան ողնաշարավոր և անողնաշար կենդանիների տեսակների

գույքագրման աշխատանքներին ինչպես նաև հետազոտություններ կացկացնեն հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանման և թվաքանակի ավելացման մեթոդներին: Կծանոթանան նաև Սևանի ձկնատեսակների բազմացման և պահպանման հիմնահարցերին փոփոխված էկոլոգիական պայմաններում: Պրակտիկան կանցկացվի նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 12-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի մեթոդիստներ՝ Ս.Շողերյանը Է.ԶԳՅ՝»ԵՍՅՅԱ նշ»օ, ձև հեռակա բակալավրյատի 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողները ուսումնական պրակտիկան կանցկացնեն իրենց ղեկավարությամբ, նախապես ծանոթանալով նախատեսվող աշխատանքներին և այն մեթոդներին, որոնց օգնությամբ կատարվելու են պլանավորված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Երաշխավորել հեռակա բակալավրյատի 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան անցկացնել ՀՀ ԳԱԱ <Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնում >:

ԼՍԵՑԻՆ

Դասավանդվող դասընթացների հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի դասախոսները ներկայացրեցին իրենց դասավանդվող առարկաների հարցաշարերը: Նշվեց, որ ներկայացված հարցաշարերը համապատասխանում են դասընթացների բովանդակությանը ,և ներկայացված պահանջներին :

ՈՐՈՇԵՑԻՆ

հաստատել հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ

ՀՊՄՀ-ի 100 ամյակի կապակցությամբ ամբիոնի աշխատակիցների պարգևատրման հարցը: Ամբիոնի

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչը առաջարկեց երկարամյա աշխատողներ կենս.գիտ.դոկտոր պրոֆեսոր Վարուժան Հովհաննիսյանին «Խաչատուր Աբովյանի» և մանկ.գիտ.թեկն. դոցենտ Լյուդմիլա Ավանեսյանին ներկայացնել «Մանկավարժական համալսարան» շքանշանների: Ամբիոնի դոցենտներ Ա.Գասպարյանին, Ս.Եղիազարյանին և ամբիոնի մասնագետ Ա.Թովմասյանին ներկայացնել համալսարանի պատվոգրերի, նրանց

երկարատև, ուսանողների կրթության և դաստիարակության գործին նվիրված ամենօրյա ազնիվ , պարտաճանաչ աշխատանքի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

իրենց գործին նվիրված ամբիոնի աշխատողները արժանի են պարգևատրման:

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԱԱ -«Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» գիտական կենտրոնի հայցորդ Հովհաննես Հովհաննեսի Կոբեյանի Գ.00.08-«Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցվող «Հրազդան հիդրոէկոհամակարգի էկոլոգամանրէաբանական բնութագիրը» թեմայով ատենախոսության առաջատար կազմակերպության կարծիքը :

Արտահայտվեցին՝

Ս.Շողերյանը, Վ.Հովհաննիսյանը, նշեցին, որ Ատենախոսությունը կազմված է ներածությունից, հինգ գլուխներից, ամփոփումից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունում ընդգրկված է 41 նկար և 20 աղյուսակ: Ընդհանուր ծավալը կազմում է 143 համակարգչային էջ: Օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է հայրենական և արտասահմանյան 184 անվանում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանման, ինչպես նաև մարդու կենսագործունեության ապահովման գործում կարևոր դեր ունեն երկրի ջրային պաշարները: Յուրաքանչյուր ջրային էկոհամակարգ տարբերվում է կենսացենոզի ինքնատիպությամբ և կառուցվածքաֆունկցիոնալ առանձնահատկություններով, որոնք սակայն մարդու գործունեության արդյունքում շատ հաճախ արմատական փոփոխությունների են ենթարկվում, ինչով և բացատրվում է գետի հիդրոէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը և առաջնահերթությունը (Щербаков, 2016; Petrosyan at all 2019):

Հրազդան գետը հանրապետության կարևոր ջրային էկոհամակարգերից է: Հրազդան հիդրոհամակարգը, որի ջրերն օգտագործվում են ջրաէներգետիկ, ոռոգման և ռեկրեացիոն նպատակներով, ներառում է ջրաբանական ռեժիմով միմյանցից խիստ տարբեր էկոհամակարգեր՝ Հրազդան գետ, Աղբյուրակի և Երևանյան լիճ ջրամբարներ:

Հոսելով Գեղարքունիք, Կոտայք, Երևան, Արարատ վարչական տարածքներով, Հրազդան գետը ենթարկվում է հզոր մարդածին ազդեցության: Գյուղատնտեսական, արդյունաբերական և

կենցաղային հոսքաջրերի ներհոսքի արդյունքում գետի ջրերն աղտոտվում են, իսկ կենսացենոզները ենթարկվում են զգալի փոփոխությունների:

Ջրի որակի ձևավորման գործընթացում մեծ դեր են խաղում միկրոօրգանիզմները: Մանրէները մասնակցելով օրգանական և անօրգանական նյութերի փոխակերպմանը, առաջացնում են հիդրոքսիդներ, համար հեշտ յուրացվող միացություններ՝ նպաստելով տրոֆիկ շղթայում նյութերի շրջապտույտին և էներգիայի հոսքին: Այդ իսկ պատճառով մանրէաբանական ուսումնասիրությունների արդյունքները մեծ նշանակություն կարող են ունենալ ջրօգտագործման և ջրային ռեսուրսների կառավարման համար:

Հրազդան գետի ջրակենսաբանական ուսումնասիրություններում գրեթե բացակայում են մանրէների որակական և քանակական տվյալները: Այդ պատճառով ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Հիդրէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտում մշակվել է «Հրազդան գետի ամբողջական էկոհամակարգի հիդրոէկոլոգիական, ջրաքիմիական և ջրակենսաբանական գիտական հետազոտությունների համալիր ծրագիր», որի շրջանականերում էլ կատարվել է սույն աշխատանքը:

Ատենախոսության գիտական նորույթը:

Հրազդան գետի էկոլոգամանրէաբանական հետազոտությունների իրականացման ընթացքում մեր կողմից առաջին անգամ

- կատարվել է Հրազդան հիդրոէկոհամակարգի ջրի որակի և էկոլոգիական պայմանների գնահատում, աղտոտված տարածքների բացահայտում մանրէաբանական ցուցանիշների (սապրոֆիտ, կոլիֆորմ բակտերիաներ) հիման վրա:
- բացահայտվել են սապրոֆիտ միկրոֆլորայի քանակական զարգացման առանձնահատկությունները տարբեր ջրաբանական ռեժիմների (գետ, ջրամբար) պայմաններում:
- բացահայտվել են կոլիֆորմ բակտերիաների քանակական, որակական, տարածական և սեզոնային փոփոխությունները և դրանց դերը ջրի որակի ձևավորման գործում:
- Հրազդան հիդրոէկոհամակարգում ուսումնասիրվել են շաքարասնկերն ու բորբոսասնկերը, բացահայտվել է տարբեր աղտոտվածության պայմաններում քանակական ցուցանիշների դինամիկան:
- Հրազդան գետի ուսումնասիրված դիտակետերում բացահայտվել է մանրէաբանական ինքնամաքման գործընթացների դինամիկան:

Աշխատանքի գործնական նշանակությունը:

- Հրազդան գետն իր վտակներով Հայաստանի համար ունի զգալի տնտեսական նշանակություն: Գետի ջրերի օգտագործումն անմիջականորեն առնչվում է սննդի անվտանգության ու առողջապահության մի շարք ոլորտների հետ, ուստի առավել կարևորվում է էկոլոգամանրեաբանական ուսումնասիրությունների իրականացումը, որի արդյունքները կօգտագործվեն անբարենպաստ ազդեցության մեղմման ուղղությամբ ծրագրերի մշակման ընթացքում:
- Մանրեաբանական ցուցանիշների հիման վրա բացահայտվել են Հրազդան գետի և նրա խոշոր վտակի՝ Մարմարիկ գետի, ստորին հոսանքի էկոլոգիական վիճակի փոփոխությաննները մարդածին գործոնի ազդեցության պայմաններում:
- Պարզվել է, որ Հրազդան գետի ջուրը Երևանյան լճում և Երևան քաղաքից հոսքով վար ընկած ամբողջ հատվածում կոլիֆորմ բակտերիաների բարձր թվաքանակի պատճառով չի կարելի օգտագործել ռեկրեացիոն նպատակով: Աերացիա մաքրման կայանից հոսքով վար դիտակետում հայտնաբերված մեծ քանակությամբ *Aspergillus* ցեղի բորբոսասանկերը նույնպես վտանգավոր են մարդու առողջության և ոռոգման նպատակով ջրի օգտագործման համար:
- Կատարված մանրեաբանական ուսումնասիրությունների արդյունքները կարևոր կիրառական նշանակություն ունեն և գիտական հիմք են հանդիսանում հանրապետության ջրային ռեսուրսների պահպանման, արդյունավետ օգտագործման և ոլորտային ջրօգտագործման հեռանկարային կանխատեսումներ կատարելու համար:
- Ստացված արդյունքները կարող են օգտագործվել Հրազդան գետի ջրի որակի և էկոլոգիական վիճակի բարելավման հեռանկարային ծրագրերում:
- Ատենախոսության նյութերը կարող են ներգրավվել “Էկոլոգիա”, “Ջրաէկոլոգիա”, “Ջրակենսաբանություն”, “Ջրային ռեսուրսներ”, “Ջրօգտագործում” ուղղություններով բուհական դասընթացներում:

Ատենախոսության առաջին գլխում կատարվել է Հրազդան և Մարմարիկ գետերի, Աղբյուրակի և Երևանյան լիճ ջրամբարների առկա ջրաէկոլոգիական ուսումնասիրությունների վերլուծություն: Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված են հետազոտության մեթոդները: Երրորդ գլխում ներկայացված է սապրոֆիտ բակտերիաների տարածաժամանակային ուսումնասիրությունների արդյունքները: Չորրորդ գլխում կատարվել է կոլիֆորմ բակտերիաների տարեկան և սեզոնային փոփոխությունների ուսումնասիրություն: Հինգերորդ գլխում իրականացվել է շաքարասնկերի և բորբոսասնկերի տարածաժամանակային հետազոտություն:

Ինչպես նաև ներկայացված են կենսածին տարրերի և սապրոֆիտ բակտերիաների ցուցանիշների կորելյացիոն վերլուծության արդյունքները:

Ղիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ Քննարկվող աշխատանքի վերաբերյալ առկա են հետևյալ ղիտողությունները՝

1. Հաշվի առնելով աղտոտման աղբյուրների բազմազանությունը՝ ցանկալի էր Երևան քաղաքի տարածքում ընտրել ավելի շատ ղիտակետեր:

2. Աշխատաքն ավելի ամբողջական կլիներ, եթե ստորին հոսանքում կատարվեր նաև ախտածին մանրէների տեսակային պատկանելիության որոշում:

3. Աշխատանքում տեղ են գտել որոշ տեխնիկական վրիպակներ:

Նշված ղիտողությունները սակայն չեն նսեմացնում ատենախոսության գիտական և կիրառական նշանակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հ.Հ. Կոբեյանի «Հրազդան հիդրոէկոհամակարգի էկոլոգամանրէաբանական բնութագիրը» ատենախոսությունը կատարված է գիտական բարձր մակարդակով, կատարված եզրակացությունները հիմնավորված են փորձարարական և տեսական փաստարկներով, լուծված են մի շարք տեսական և կիրառական խնդիրներ:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին:

Հ.Հ. Կոբեյանի «Հրազդան հիդրոէկոհամակարգի էկոլոգամանրէաբանական բնութագիրը» ատենախոսությունը իր գիտական մակարդակով և գործնական արդյունքներով համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ հեղինակը՝ Հոփսիմե Հովհաննեսի Կոբեյանը արժանի է 03.00.08 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հոփսիմե Հովհաննեսի Կոբեյանի կեղմից ներկայացված «Հրազդան հիդրոէկոհամակարգի էկոլոգամանրէաբանական բնութագիրը» թեմայով ատենախոսության կարծիքը քննարկվել է ՀՊՄՀ-ի «Էկոլոգիայի և կայուն զարգացման» ամբիոնի նիստում (արձ. թիվ 4, 03.11.22թ.), որին մասնակցել են ամբիոնի վարիչ .գ.թ, Ս.Ա. Շողերյանը, Կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Հովհաննիսյանը, մանկ. գիտ. Թեկնածու, դոցենտ Լ. Գ. Ավանեսյանը, կ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գասպարյանը, դասախոս Ս.Ս. Եղիազարյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Անդրանիկ Արայի Գյոնջյանի «Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված 03.00.08-«Կենդանաբանություն.

մակարածաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության առաջատար կազմակերպության կարծիքը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ.Հովհաննիսյանը, Ս. Շողերյանը, նշեցին, որ Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով և կազմված է 117 էջից, կազմված է ներածությունից, 6 գլուխներից, ամփոփումից եզրակացություններից, պարունակում է 106 աղյուսակ, 9 լուսանկար: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 107 հայրենական և արտասահմանյան անվանում:Այն բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հոլոցենյան ֆաունայի պատմության ուսումնասիրման հիմնական աղբյուրը հանդիսանում է հնագիտական հուշարձանների պեղումներից ստացված ֆաունիստիկ մնացորդները: Հայտնաբերված վայրի և ընտանի կենդանիների ոսկրային մնացորդների ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռնում գաղափար կազմել հնագույն մշակույթների մասին:

Հատկապես վերջին տարիներին Շիրակի մարզի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված ոսկրաբանական նյութերը թույլ են տալիս պատկերացում կազմել անցյալի ֆաունայի բազմազանության, որսորդության, անասնապահության և այդ ժամանակներում բուծված ընտանի կենդանիների ֆիզիկական կառուցածքի մասին:

Հետազոտության նպատակն է՝

Հյուսիս-արևմտյան Հայաստանի հնագույն հուշարձաններից հայտնաբերված ոսկրաբանական նյութերի հիման վրա ուսումնասիրել որսորդությունը և անասնապահությունը բրոնզե և երկաթե դարերում:

Ատենախոսության գիտական նորույթը:

- Առաջին անգամ որոշվել և սիստեմավորվել են բրոնզի և երկաթի դարերի ոսկրաբանական նյութերը, Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում:
- Պարզվել է վայրի և ընտանի կենդանիների կազմը և տոկոսային փոփոխարաբերությունը բրոնզի և երկաթի դարերի Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում:
- Որոշվել է վայրի և ընտանի կենդանիների ողնաշարային տարրերի մորֆոմետրիկ պարամետրերը և դրանց փոփոխությունները տարբեր ժամանակներում:

- Կատարվել է Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանների հնագույն հուշարձաններից հայտնաբերված ոսկրաբանական նյութի քանակական և որակական տվյալների համեմատական վերլուծություն:

Աշխատանքի գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ, հետևողական և սահուն անցումներով: Գրական տեղեկություններն օգտագործված են նպատակային, համապատասխան վերլուծություններով, հղումները կատարված են տեղին: Հիշատակված գրական աղբյուրները համապատասխանում են կատարված հետազոտությունների բնույթին և էությանը, մեջբերված են տեղին և ընդգրկում են ատենախոսության ամբողջ նյութը:

Յուրաքանչյուր գլխում ատենախոսը ներկայացնում և վերլուծում է իր առջև դրված նպատակային խնդիրները:

Ատենախոսության **առաջին գլխում** հեղինակը ներկայացնում է հյուսիս-արևմտյան Հայաստանի չորրորդական ժամանակաշրջանի ֆաունայի ուսումնասիրմանը վերաբերվող գրականության ակնարկը:

Ատենախոսության **երկրորդ գլխույի** վերաբերվում է հետազոտվող նյութերի ընդհանուր բնութագրմանը և ուսումնասիրությունների մեթոդիկային:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրանց քննարկումը բերվում է երրորդ, չորրորդ և հինգերորդ գլուխներում.

Երրորդ գլխում բերված են հեղինակի սեփական դիտարկումները հանդիսացող ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի 9 հնագիտական հուշարձաններից (Մեծ Սեպասար, Հայկաձոր, Ագատան, Շիրակավան, Ջրափի, Գյումրի, Մայիսյան, Լոռի բերդ) հայտնաբերված ոսկրաբանական նյութերի քանակական և որակական տվյալները:

Չորրորդ գլխում ներկայացված են որոշված 16 կենդանատեսակներից յուրաքանչյուրին պատկանող ոսկրային մնացորդների, ինչպես քանակական, այնպես էլ ձևակազմաչափական ուսումնասիրման արդյունքները:

Հինգերորդ գլխում համեմատվում և ընդհանրացվում են հյուսիս-արևմտյան Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանի հնագիտական բոլոր հուշարձաններից հայտնաբերված հնակենդանաբանական նյութերի վերլուծության արդյունքները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփված են 9 կետից բաղկացած եզրակացություններում, որոնք տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և արտացոլում են ստացված արդյունքները:

Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Քննարկվող աշխատանքի վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները:

1. Աշխատանքում առկա են որոշ վրիպակներ և տառասխալներ
2. Առաջին կամ երկրորդ գլուխում ճիշտ կլիներ անդրադարձ կատարել դիտարկվող տարածքում բրոնզի և երկաթի դարաշրջանների տևողությանը:
3. Ցանկայի է, որ հավելվածում նշվեին նաև ուսումնասիրված նմուշների կոլեկցիոն համարները:
4. Աշխատանքն առավել տպավորիչ կլիներ, եթե վերջինումս ներառված լինեին ավել մեծ թվով նկարներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Անդրանիկ Արայի Գյոնջյանի «Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքներում» թեմայով ատենախոսությունը կատարված է գիտական բարձր մակարդակով, կատարված եզրակացությունները հիմնավորված են փորձարարական և տեսական փաստարկներով, լուծված են մի շարք տեսական և կիրառական խնդիրներ:

Ատենախոսության սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Անդրանիկ Արայի Գյոնջյանի «Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքներում» ատենախոսությունը իր գիտական մակարդակով և գործնական արդյունքներով համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ հեղինակը՝ Անդրանիկ Արայի Գյոնջյանն արժանի է 03.00.08 «Կենդանաբանություն, մակաբուժաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Անդրանիկ Արայի Գյոնջյանի «Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքներում» թեմայով ատենախոսության կարծիքը քննարկվել է ՀՊՄՀ-ի Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի նիստում (արձ. թիվ 4, 03.11.22թ.), որին մասնակցել են ամբիոնի վարիչ Վ.Գ. Ս.Ա. Շողերյանը, Կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Հովհաննիսյանը, մանկ. գիտ. Թեկնածու, դոցենտ Լ. Գ. Ավանեսյանը, կ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գասպարյանը, դասախոս Ս.Եղիազարյանը:

Ամբիոնի վարիչի ժ/պ
քարտուղար

Ս.Շողերյան
Ա.Թովմասյան

Արձանագրություն № 5

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2022թ. դեկտեմբերի 7-ին նիստի:

Ներկա էին Ս.Շողերյան, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Մ.Ավագյան, Ա.Գասպարյան, Ա. Թովմասյանը:

Օրակարգ

1. Քննական առարկաներից խորհրդատվությունների կազմակերպելու հարցը:
2. Քննական տոմսերի հաստատում:
3. Առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումներ և ինքնուրույն աշխատանքների ամփոփում:
4. Ուսումնական պրակտիկայի հաշվետվություն:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

քննական առարկաներից խորհրդատվություններ կազմակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը նշեց, որ ամբիոնում անհրաժեշտ է կազմակերպել խորհրդատվություն, ուսանողներին հետաքրքրող հարցերը բավարարելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

կազմակերպել խորհրդատվություններ դեկանատի ներկայացված գրաֆիկի համաձայն:

ԼՄԵՑԻՆ

առաջին կիսամյակի հարցաշարերի քննական տոմսերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ս.Եղիազարյան, Ս.Շողերյանը: Նրանք ներկայացրեցին առարկայական հարցաշարերը և քննական տոմսերը: Հարցաշարերը ներկայացված են օնլայն հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ

ներկայացված հարցաշարերը և տոմսերը լիովին համապատասխանում են առարկայական ծրագրերին և դասընթացներում ընդգրկված թեմաներին:

ԼՄԵՑԻՆ

Ուսումնական պրակտիկայի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Մեթոդիստները նշեցին, որ ուսանողները ակտիվ կերպով մասնակցել են աշխատակիցների կողմից կատարվող բոլոր աշխատանքներին: Ծանոթացել են լաբորատորիայի գերժամանակակալից սարքավորումներին, մոնիթորինգի դիտացանցին, նմուշառման մեթոդներին, նմուշների անհրաժեշտ մշակման և համապատասխան չափումների սկզբունքներին: Այնուհետև, նրանք ծանոթացել են տվյալների ստացման և դրանց մշակման մաթեմատիկական մոտեցումներին: Եղել են պարտաճանաչ, ուշիմ և ակտիվ ուսանողներ, անմիջական կարողացել են մասնակցել օդի, ջրի, հողի նմուշների մշակման, դրանց չափման և տվյալների ստացման ընթացքին:

ՈՐՈՇԵՑԻՆ

Պրակտիկայի ընթացքը համարել հաջողված և գնահատել գերազանց:

ԼՍԵՑԻՆ

Հայ-Ռուսական համալսարանի 25-ամյակին նվիրված կոնֆերանսում , մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Անի Հարությունյանի «80 բույե տևողությամբ դասաժամի արդյունավետության գնահատման Ֆիզիոլոգիական մեխանիզմները ուսումնական գործընթացում» թեմայով զեկուցման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Ա.Գասպարյանը, Ս.Եղիազարյանը, Վ.Հովհաննիսյանը, նշեցին , որ հետազոտության արդյունքները, որպես նորույթ ունեն գիտական և գործնական արժեք: Զեկուցումը կազմված է գիտական բարձր մակարդակով և գեղեցիկ, գրագետ հայերենով:

ՈՐՈՇԵՑԻՆ

Երաշխավորել Անի Հարությունյանին մասնակցելու գիտական կոնֆերանսին և ներկայացնելու զեկուցումը:

Ամբիոնի վարիչի ժ/պ՝
քարտուղար

Ս.Շողերյան
Ա.Թովմասյան

Արձանագրություն № 6

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2023թ. փետրվարի 3-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին, Ս.Շողերյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ.Ավագյանը Ա. Թովմասյանը:

Օրակարգ

1. Առաջին կիսամյակի քննությունների և ստուգարքների ամփոփում:
2. Երկրորդ կիսամյակի դասերի կազմակերպումը:
3. Ուսանողների ուսումնական պրակտիկայի կազմակերպման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչի պաշտոնակատար Սիրինե Շողերյանի հաղորդումը ամբիոնի դասախոսների կողմից | կիսամյակում անցկացված ստուգարքների և քննությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ.Ավագյանը նշեցին, որ ստուգարքները և քննությունները անցկացվել են ըստ դեկանատի կողմից նշված ժամանակացույցի, հանգիստ և խաղաղ մթնոլորտում: Ուսման վարձը չմուծելու պատճառով որոշ ուսանողների դեկանատը թույլ չի տվել մասնակցելու քննություններին և ստուգարքներին: Մասնակցող ուսանողները հաջողությամբ են ավարտել քննաշրջանը ստանալով լավ և գերազանց գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

1-ին կիսակյակի քննաշրջանի աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ

Երկրորդ կիսամյակի դասերի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչի ժ/պ Ս.Շողերյանը նշեց, որ պահանջվում է ռեֆերատի գնահատման նոր բաղադրիչներ և չափանիշներ: Ռեֆերատի կատարումը ենթադրում է ուսանողի կողմից 3 բաղադրիչների կատարում՝ $100\%=30\%+30\%+40\%$:

Բաղադրիչ 1. Ռեֆերատի ձևակերպման և բովանդակության համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և պահանջներին (30%):

Բաղադրիչ 2. Էլեկտրոնային հարթակում գնահատվող հանձնարարություն (նախագծի կառուցում) 30%:

Բաղադրիչ 3. Ուսանողի կողմից ռեֆերատի բովանդակության տիրապետման և ներկայացման մակարդակը (40%):

ԵՎ միայն բաղադրիչների ամբողջական և արդյունավետ կատարման համար ուսանողը կգնահատվի առավելագույնը՝ 100 միավոր: Շողերյանը նշեց նաև, որ փետրվարի 9-ից սկսվում են առկա համակարգի դասընթացները, ուստի դասախոսները պետք՝ հաշվի առնեն հետևյալը՝

1. Այն դասընթացների համար, որոնք իրենց վերջնարդյունքում ունեն գնահատման Ընթացիկ ստուգում բաղադրիչը, Google Classroom հարթակում խնդրում ենք տեղադրել առնվազն մեկ շաբաթ տևողությամբ, ամբողջ կիսամյակի ընթացքում նվազագույնը երկու գնահատվող առաջադրանք, բայց ոչ ավել քան չորսը: Արդյունքների միջին թվաբանական գնահատականը խնդրում ենք օգտագործել ams.aspu.am համակարգում Ընթացիկ ստուգում բաղադրիչը գնահատելիս: Փետրվար ամսից սկսած նշված գործառույթը նույնպես կմշտադիտարկվի Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից:
2. Առկա մագիստրատուրայում, հիբրիդային ուսուցման գործընթացում, այն դասընթացները, որոնք իրականացվում են առցանց ձևաչափով, պետք է ուշադիր լինել, որ առցանց դասընթացները կազմակերպվեն դասացուցակին համապատասխան, ոչ ուշ քան տվյալ օրը ժամը 17:30: Պարտադիր է, որ տվյալ օրվա ամսաթվով Google classroom հարթակի Streem դաշտում տեղարդվեն դասընթացի իրականացման գործընթացից առնվազն 3 էկրանային նկար (Screenshot)՝ առանց խմբագրման, որտեղ պետք է տեսանելի լինեն միացված ուսանողները, ինչպես նաև տվյալ համակարգչի ամսաթիվն ու ժամանակը: Փետրվար ամսից սկսած նշված գործառույթը նույնպես կմշտադիտարկվի Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից:

ՈՐԵՇԵՑԻՆ

Ծանոթանալ ամբիոնում ներկայացված ռեֆերատի բաղադրիչների գնահատման չափանիշներին և գնահատումը իրականացնել ըստ այդ չափանիշների, ծանոթանալ և աշխատել ըստ ներկայացված պահանջներին:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ս. Շողերյանի հաղորդումը II , III և հեռակա V կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկայի կազմակերպման մասին: Ս.Շողերյանը նշեց, որ մեր համալսարանը համագործակցության հուշագիր է կնքել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի միջև համատեղ գիտահետազոտական աշխատանքների և մասնագիտական աջակցություն իրականացնելու մասին: Այսուհետ մեր ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան, հուշագրով համագործակցության շրջանակներում, կանցկացնեն «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում: Կազմակերպությունը Երևան քաղաքում իրականացնում է կանաչապատում, կանաչ տարածքների պահպանություն, խնամք, մաքրում, ոռոգում, քաղաքային լանդշաֆտի պլանավորում, կանաչ գոտիների մոնիթորինգ և քարտեզագրում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան մասնակցելու Երևան քաղաքի համաչափ զարգացմանը, քաղաքի կանաչ ֆոնդը մշտադալար բազմամյա բույսերով հարստացնելուն:

Դասախոսների համար կանցկացվեն վերապատրաստումներ, համատեղ կկազմակերպվեն գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, խորհրդակցություններ և կիրականացվեն համատեղ դրամաշնորհային ծրագրեր:

Ս. Շողերյանը ներկայացրեց նաև ՀՈԱԿ-ի նախաձեռնությամբ սույն թվականի փետրվարի 23-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպված «Երևան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող և ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր և գեղազարդ ծառերով: Ինվազիվ ծառերի հեռացում» խորագիրը կրող գիտական աշխատաժողով, որին հրավիրված էր նաև ինքը: Ս.Շողերյանը նշեց, որ աշխատաժողովների արդյունքում որոշվեց, որ Երևան համայնքում անհրաժեշտ է աստիճանական իրականացնել ամբողջությամբ դեֆորմացված և կենսունակության ավարտին մոտ գտնվող ծառատեսակների փոխարինում նույն, կամ առավել հիմնավորված ցեղատեսակի արժեքավոր և գեղազարդ ծառատեսակներով: Անհրաժեշտ է նաև իրականացնել ինվազիվ ծառատեսակների հերթականությամբ հեռացում կամ դրանց հնարավոր ծառատեսակներով՝ տեղանքի առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ողջունել նախաձեռնությունը և համագործակցել ՊՈԱԿ-ի հետ կատարվելիք աշխատանքներում:

Ամբիոնի վարիչի ժ/պ
Մասնագետ՝

Ս. Շողերյան
Ա. Թովմասյան

Արձանագրություն № 7

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի 2023թ. մարտի 17-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին, Ս.Շողերյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ.Ավագյանը Ա. Թովմասյանը:

Օրակարգ

1. Մագիստրական թեզերի, ավարտական աշխատանքների ընթացքի քննարկում:
2. Կուրսային աշխատանքների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

մագիստրական թեզերի, ավարտական աշխատանքների ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի հեռակա բակալավրիատում պատրաստվում էր 4 ավարտական աշխատանք ,իսկ մագիստրատուրայում 5 մագիստրոսական ատենախոսություն :

Ուսանողները նշեցին, որ ավարտել են փորձարարական աշխատանքները, մշակել են համապատասխան գրականություն և այժմ անցել են ավարտական աշխատանքների շարադրմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

հավանություն տալ կատարած աշխատանքներին և հանձնարարել ուսանողներին, մինչև սույն թվականի ապրիլի 14-ը ավարտել աշխատանքները և ներկայացնեն ամբիոն նախապաշտպանության համար:

ԼՄԵՑԻՆ

կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ ղեկավարների ելույթները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Լ.Ավանեսյանը և Ս.Շողերյանը կուրսային աշխատանքների վերաբերյալ, նշեցին, որ տարբեր կուրսերում ներկայացվել են կուրսային աշխատանքներ: Քննարկվել են և գնահատվել: Արդյունքները գոհացուցիչ են:

ՈՐՈՇԵՑԻՆ

կուրսային աշխատանքների կատարումը համարել լավ:

ԼՄԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը, որը վերաբերում է պրոֆեսորադասախառնական և ուսումնաօժանդակ կազմին:Նա հայտնեց, որ ամբիոնի

պրոֆեսորդասախոսական և ուսումնօժանդակ կազմը համապատասխանում է ռեկտորի կողմից հաստատված և գործունեության մեջ դրված հաստիքակազմին: Ամբիոնում աշխատում են 1 գիտությունների դոկտոր, 1 պրոֆեսոր և 5 դոցենտ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանի հաղորդումը ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ: Նշեց որ այդ գործընթացում մասնակցում են նաև մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ կատարող ուսանողները: Ամբիոնում կատարվող հետազոտական աշխատանքները արդիական են և արդյունքները տպագրվում են հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում, զեկուցվում են նաև միջազգային գիտաժողովներում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

մ.գ.թ.Լ.Ավանեսյանը, կ.գ.թ.-ներ Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը, դոցենտ Ս.Եղիազարյանը, կ.գ.դ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ս.Շողերյանի հաղորդումը ամբիոնում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

մ.գ.թ.Լ.Ավանեսյանը, կ.գ.թ.-ներ Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը, դոցենտ Ս.Եղիազարյանը, կ.գ.դ.Վ.Հովհաննիսյանը: Նրանք նշեցին, որ մարդկային ռեսուրսները ամբիոնում դրսևորվելու քիչ հնարավորություններ ունեն, որովհետև ամբիոնը չունի անհրաժեշտ սարքավորումներ լաբորատորիայի համար: Դասախոսները հետազոտական աշխատանքները ուսանողների ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը կատարելու համար համագործակցում են ԳԱԱ-ին համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի ժ/պ

մասնագետ`

Ս.Շողերյան

Ա.Թովմասյան

Արձանագրություն 8

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի

2023 թ. ապրիլի 17 –ի թիվ 8 նիստի

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ս.Շողերյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ. Ավագյանը, Ա. Թովմասյանը:

Օրակարգ`

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:
2. Քննական առարկաների խորհրդատվությունների կազմակերպում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

քննական առարկաների խորհրդատվությունների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը նշեց, որ անհրաժեշտ է ամբիոնում սահմանել դասախոսների հերթապահություն, ավարտական կուրսերի ուսանողների հետ խորհրդատվություններ կազմակերպելու համար:

Որոշեցին

խորհրդատվությունների համար սահմանել հստակ գրաֆիկներ և ըստ այդ գրաֆիկների էկոլոգիական և բնապահպանական ցիկլի բոլոր դասընթացների համար անց կացնել խորհրդատվություններ:

ԼՄԵՑԻՆ

մագիստր 2-րդ կուրսի թեզերի նախապաշտպանությունը: Ուսանողները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները ՔՔ ծրագրով:

Մագիստրատուրա 2-րդ կուրս

1. Էկոտուրիզմի զարգացման հեռանկարները Վայոց ձորում:

Կատարող – Սիլվա Դարբինյան

Ղեկավար - Լ.Ավանեսյան

2. Ազատ գետի ավազանի գիհու նոսրանտառների ֆլորիստիկ կազմը:

Կատարող – Ա.Խաչատրյան

Ղեկավար - Վ. Հովհաննիսյան

3. Էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման հեռանկարները և դրա ազդեցությունը ՀՀ էկոլոգիական վիճակի վրա:

Կատարող – Հ.Ներսիսյան

Ղեկավար - Ս.Շողերյան

4. Ուսանողների ուշադրության և մտավոր աշխատունակության ուսումնասիրումը հեռավար կրթության պայմաններում:

Կատարող – Ա.Հարությունյան

Ղեկավար - Ս.Շողերյան

5. Արարատի մարզի մոլախոտային բուսականություն

Կատարող – Գ.Վարդանյան

Ղեկավար - Ա. Գասպարյան

ՉՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը, ամբիոնի դասախոսներ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյան, Ա.Գասպարյանը, Ս.Եղիազարյանը: Նշեցին կատարած աշխատանքներում եղած թերությունները, արվեցին դիտողություններ ,եզրակացությունների և առաջարկությունների վերաբերյալ: Ընդգծեցին, որ ուսանողների կողմից կատարած աշխատանքները արդիական են, բխում են կրթական համակարգի ժամանակակից պահանջներից, հիմնավորված են և փաստարկված : Օգտագործված գրականության աղբյուրները արդի են և համապատասխանում են թեմաներին: Աշխատանքները շարադրված են գրագետ, հետազոտության արդյունքները ամփոփված են եզրակացության մեջ: Ներկայացված են առանցքային առաջարկություններ: Աշխատանքի դրույթները և եզրակացությունները բխում են նպատակից և առաջադրված խնդիրներից: Յուրաքանչյուր աշխատանքի համար նշվեցն թերությունները, բացթողումները և վրիպակները.

ՈՐՈՇԵՑԻՆ

հանձնարարել ուսանողներին , շտկել արված թերությունները և ներկայացնել պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանի հաղորդումը մայսի 2-7-ը Պորտուգալիայի Հանրապետություն FENS –ի տարեկան գիտաժողովին մասնակցելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի դասախոսները, նշեցին որ սա լավ հնրավորություն է «Հեռավար ուսուցման հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կոռոնավիրուսային համաճարակի պայմաններում» գիտական թեմայի արդյունքները ներկայացնելու միջազգային հարթակում :

ՈՐՈՇԵՑԻՆ

ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի ժ/պ`

Մասնագետ`

Ս.Շողերյան

Ա.Թովմասյան

Արձանագրություն N 9

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի

2023թ. մայիսի 22-ի նիստի

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ս.Շողերյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ. Ավագյանը, Ա. Թովմասյանը:

Օրակարգ`

1. Ուսումնական պրակտիկայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ:
2. Երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների խորհրդատվությունների կազմակերպում
3. Հեռակա բակալավրի ավարտական աշխատանքների նախապաշտպանություններ
4. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

Ուսումնական պրակտիկաների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը , դոցենտներ` Լ.Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, դասախոսներ Մ.Ավագյանը, Ա.Գասպարյանը: Նշեցին, որ ուսումնական պրակտիկայի կազմակերպման համար կազմվել է պլան, ըստ որի նախատեսել են ճանաչողական էքսկուրսիաներ դեպի Հրազդանի կիրճ, Ստեփանավանի ՖԴենդրոպարկ!, հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Բուսաբանական այգի, բնության թանգարան, ջրերի մաքրման կայան և դեպի Սևանա լիճ և Որոռների արգելոց:

ՈՐՈՇԵՑԻՆ

հավանություն տալ պլանով նախատեսված բոլոր աշխատանքներին և հաստատել ներկայացված պլանը:

ԼՄԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի ստուգարքների և քննությունների խորհրդատվությունների կազմակերպման հարցը: Ս.Շողերյանը նշեց, որ բոլոր քննական դասընթացներից նախատեսված է ըստ դեկանատի ներկայացված գրաֆիկի կազմակերպել խորհրդատվություններ: Անհրաժեշտ է ամբիոնում դասախոսների հերթապահություն ցանկացած ժամի ուսանողների հետ հանդիպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

խորհրդատվությունների համար սահմանել հստակ գրաֆիկներ և հերթապահություն :

ԼՄԵՑԻՆ

ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոնների հետ ունեցած պայմանագրերի հարցը.

ՉՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը, հանձնարարեց ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոնների հետ ունեցած բոլոր պայմանագրերը վերանայել, նոր ուսումնական տարվա համար կնքել նոր պայմանագրեր.

ՈՐՈՇԵՑԻՆ

ընդունել ի գիտություն:

ԼՄԵՑԻՆ

հեռակա բակալավր 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների հարցը: Ուսանողները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները PP ծրագրով:

Հեռակա 5-րդ կուրս

1. Սնկերը որպես միջավայրի աղտոտվածության կենսաինդիկատորներ-
Կատարող – Գեղամ Գրիգորյան
Ղեկավար - Ա.Գասպարյան
2. Ագրոէկոտուրիզմի ռեսուրսները Արարատի մարզում
Կատարող – Կարինե Հյուսնունց
Ղեկավար - Լ.Ավանեսյան
3. Մննդի մեջ ծանր մետաղների առկայությունը և դրանց ազդեցությունը դպրոցականների մտավոր և ֆիզիկական զարգացման վրա
Կատարող – Լիլիթ Խաչատրյան
Ղեկավար - Լ.Ավանեսյան
4. Արարատյան դաշտի մալարիայի մոծակների կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները:
Կատարող – Մարգարիտ Նալբանդյան
Ղեկավար - Ա.Գասպարյան

Ուսանողները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները,

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Դասախոսները նշեցին, որ աշխատանքներում կան վրիպակներ, տեխնիկական թերություններ, որոշ աշխատանքներում գոյություն ունեն ոչ գեղեցիկ հայերենով ձևակերպումներ,

ՈՐՈՇԵՑԻՆ

Հանձնարարել ուսանողներին շտկել բոլոր թերությունները և ներկայացնել պաշտպանության:

ԼՄԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանի հաղորդումը Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանում կազմակերպված «Սթրես և վարք» թեմայով միջազգային գիտաժողովին մասնակցության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի դասախոսները, նշեցին որ ևս մեկ անգամ լավ հնարավորությունն է ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ներկայացնելու միջազգային հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ

ընդունել ի գիտություն

Ամբիոնի վարիչի ժ/պ`

Ս.Շողերյան

Մասնագետ`

Ա.Թովմասյան

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2023թ.

Հունիսի 30-ի N10 նիստի

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ս.Շողերյանը, Լ.Ավանեսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Մ. Ավագյանը, Ա. Թովմասյանը:

Օրակարգ`

1. Ստուգարքների և քննությունների արդյունքների ամփոփում:
2. Մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունների և ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:
3. Ամբիոնի հաշվետվության կազմում:
4. 2023-2024ուս. տարվա ծավալի կազմում:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ

Երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը, դոցենտներ` Լ.Ավանեսյանը, Մ.Ավագյանը , դասախոսներ Ս. Եղիազարյանը: Նշեցին, որ ստուգարքները և քննությունները բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են ըստ դեկանատների կողմից կազմված գրաֆիկների: Կան ստուգարքներին չներկայացած ուսանողներ: Քննությունները անցել են կազմակերպված և խաղաղ մթնոլորտում: Անբավարար ստացող ուսանողներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ

Երկրորդ կիսամյակի ստուգարքները և քննությունները համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ

Մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունների և ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ժ/պ Ս.Շողերյանը, դոցենտներ Լ. Ավանեսյանը, և Մ.Ավագյանը: Նշեցին, որ „Շրջակա միջավայրի գիտություններ“ մագիստրատուրա $\mu^3\text{Á}\text{Ý}\text{Ç}$ 5 և հեռակա բակալավրիատի 4 $\acute{\alpha}\acute{\delta}\acute{\epsilon}^3\acute{Y}\acute{\acute{\alpha}}\acute{\text{O}}\acute{Y}$ » $\acute{\eta}$ \acute{Y} » $\acute{\eta}$ $\acute{\acute{3}}\acute{U}^3\acute{\acute{o}}$ » \acute{E} են մագիստրոսական ատենախոսություններ և ավարտական աշխատանքներ, հաջողությամբ պաշտպանել են և $\acute{\epsilon}$ $\acute{\acute{3}}\acute{o}$ » \acute{E} են հետևյալ գնահատականները:

Մագսիտրատուրա 2-րդ կուրս

- 1, Անուշիկ Խաչատրյան -97.50
2. Անի Հարությունյան- 97.67
- 3.Սիլվա Դարբինյան-95.00
4. Հերթնազ Ներսիսյան-91.14
5. Գրիգոր Վարդանյան -90.14

Հեռակա բակալավր 5-րդ կուրս

- 1.Գեղամ Գրիգորյան-61.71
- 2.Լիլիթ Խաչատրյան -90.57
- 3.Կարինե Հյուսունց 76.43
- 4.Սարգսրիտ Նալբանդյան 79.86

Անբավարար գնահատական ստացող ուսանող չի եղել :

ՈՐՈՇԵՑԻՆ

մագիստրոսական ատենախոսությունների:և ավարտական աշխատանքների պաշտպանությունները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ

2023-2024 ուս. տարվա ամբիոնում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը: Նա նշեց, որ ընթացիկ տարում ամբիոնում աշխատել են 6 դասախոսներ, որոնց ուսումնական ծանրաբեռնվածությունը համապատասխանում է կանոնակարգով հաստատված ժամաքանակին: Ամբիոնի դասախոսները բարեխղճորեն առանց բացթողումների կատարել են իրենց բոլոր պարտականությունները: Ամբիոնում անց են կացվել 9 ամբիոնի նիստեր, որտեղ քննարկվել են պլանով նախատեսված և ընթացիկ հարցերը: Նշվեց, որ քննաշրջանները և ամփոփիչ ատեստավորումները անց են կացվել , կազմակերպված և բարձր մակարդակով: Անց են կացվել խորհրդատվություններ, դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ:

Հաշվետու տարում ամբիոնը իրականացրել է հետազոտական գործունեություն, ուսումնական, մասնագիտական պրակտիկաներ: Դրանք կազմում են ամբիոնի աշխատանքների հիմնական մասը, որոնք անցկացվում են ՀՀ ԳԱԱ լավագույն գիտահետազոտական կենտրոններում և ղեկավարվում բազմաթիվ տարիների փորձ ունեցող դասախոսների կողմից: Ամբիոնում անց են կացվել գիտական սեմինարներ: Հաշվետու

տարում ամբիոնը ներքին շահակիցների ներգրավվածությամբ (ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական) կազմակերպել է գիտ-արշավ Բյուրականի անտառ-Ամբերդ երթուղով Երևանի բուսաբանական և կենդանաբանական այգիներ, բնության թանգարան, ԱԻՆ, Ջրերի մաքրման կայան, ՀՀ ԱՆ նարկոլոգիական կենտրոն:

ՈՐՈՇԵՑԻՆ

ամբիոնի աշխատանքները գնահատել լավ և ընդունել ներկայացրած հաշվետվությունը:

ԼՄԵՑԻՆ

2023-2024ու. տարվա ամբիոնի ծավալի կազմման հարցը:

Ամբիոնի վարիչ Ս.Շողերյանը ներկայացրեց ընթացիկ ուս. տարվա ամբիոնի ժամաքանակը: Նա նշեց , որ Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2023-2024 ուս.տարվա ժամաքանակը կազմում է 4481 ժամ:

Առկա բակալավր- 2035 ժամ

Հեռակա բակալավր- 1185 ժամ

Մագիստրատուրա – 1261 ժամ

ՈՐՈՇԵՑԻՆ

ամբիոնի 2023-2024ու. տարվա ուսումնական աշխատանքների ծավալը ներկայացնել հաստատման:

Նիստի նախագահ՝

Քարտուղար՝

Ս. Շողերյան

/ Ա.Թովմասյան/